

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի փետրվարի 26-ին կայացած Գիտական Խորհրդի N7 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 27-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների կատարման ընթացքը ամբիոններում /զեկ. ամբ.վարիչներ/
2. Առկա և հեռակա ուսուցման 1-ին կուրսերի կուրատորների կատարած աշխատանքների հաշվետվություն /զեկ. կուրատորներ/
3. 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում /զեկ. փոխդեկան Մ.Գրիգորյան/
4. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի քննարկումն ու հաստատումը /զեկ. փոխդեկան Վ.Վարդանյան/
5. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ /զեկ. ամբ.վարիչ Ա.Պոտոսյան/
6. Ընթացիկ հարցեր

Օրակարգի հաստատումից հետո Մ.Գրիգորյանը ներկայացրեց.

- ԵՊՀ 100ամյակին նվիրված միջոցառումների ցանկում ընդգրկված՝ ֆակուլտետում սեպտեմբերի 27-29 միջազգային գիտաժողովի կազմակերպման հետ կապված հարցերը: Իր խոսքում Մ.Գրիգորյանը ներկայացրեց նաև կայանալիք գիտաժողովի պատասխանատուներին և կազմկոմիտեի ցանկը:

• Ֆակուլտետի և ռեկտորատի միջնորդությամբ ՀՀ ԿԳՆ կողմից սերվիս ամբիոնի պրոֆ. Ա.Ռ.Ավագյանին ոսկե մեդալով պարգևատրման հավաստագիրը՝ Երիտասարդ սերնդի կրթության դաստիարակության գործում ներդրած ավանդի և ազգանպաստ գիտամանկավարժական գործունեության համար ԵՊՀ սերվիսի ամբիոնի պրոֆեսոր, աշխ. գիտ. դոկտոր Արամայիս Ռոստամի Ավագյանին պարգևատրել ՀՀ ԿԳՆ բարձրագույն մեդալով՝ ոսկե հուշամեդալով: Մ.Գրիգորյանը շնորհավորեց և ի հավելում նշեց, որ մեդալը՝ ֆակուլտետում Ա.Ավագյանի աշխատանքի արդյունքն ու նվիրումն է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ. Ս.Ռ.Սուվարյանը խոսեց Ա.Ավագյանի մարդասիրական հատկանիշների, ուսանողների հանդեպ ունեցած դաստիարակչական և հոգատար վերաբերմունքի ինչպես նաև հումանիզացիայի մասին: Իր խոսքը Ս.Ռ.Սուվարյանն ավարտեց առողջություն մաղթելով:

1. ԼՄԵՑԻՆ. Ամբիոնի վարիչներ Ս.Հ.Հայրոյանի, Պ.Գ.Դավթյանի, Թ.Գ.Վարդանյանի, Ա.Հ.Պոտոսյանի, Ս.Ռ.Սուվարյանի, Գ.Վ.Մարկոսյանի, Հ.Ի.Սովսեայանի և Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը ամբիոններում 2017/2018 ուստարվա ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ: Բոլոր ամբիոնի վարիչները մանրակրկիտ կերպով ներկայացրեցին ամբիոնում առկա շրջանավարտների թիվը: Բոլոր ամբիոնի վարիչներն էլ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքը գնահատեցին բավարար՝ հետագա աշխատանքը շարունակելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանը, ով հանձնարարեց ուսանողների և ղեկավարների հանդիպումների գրաֆիկ կազմել: Խոսեց նաև ղեկավարի կողմից ուսանողների ոչ միայն թեմատիկային վերաբերող գիտելիք տալու մասին այլև առարկայական գիտելիքների որակը բարձրացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2. ԼՄԵՑԻՆ. Առկա և հեռակա ուսուցման 1-ին կուրսերի կուրատորներ Վ.Անդրեասյանի՝ սերվիս մասնագիտության 1-ին կուրսի, Ա.Հովհաննիսյանի՝ քարտեզագրության և կադաստրային գործ մասնագիտության 1-ին կուրսի, Կ.Ալեքսանյանի՝ Աշխարհագրություն մասնագիտության 1-ին կուրսի, հաշվետվությունները կատարած աշխատանքների

վերաբերյալ: Կուրատորներից բոլորն էլ ներկայացրեցին կատարած աշխատանքները: Նշեցին, որ ուսման առաջին իսկ օրվանից կազմակերպվել են հանդիպումներ ֆակուլտետի ղեկավարության հետ, քննարկել են ուսանողների իրազեկված լինելը ուսման կանոնակարգի, ուսանողների իրավունքների և պարտականությունների և ուսման ընթացքում ծագած դժվարությունների վերաբերյալ: Որոշ կուրատորներ նախապես մշակած հարցաթերթիկներով, սոցիալական վիճակի հարցում են անցկացրել, ինչն ավելի հստակ է դարձնում կուրսում եղած սոցիալական վիճակի ֆոնային պատկերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ.Վարդանյանը խոսեց 1-ին կուրսեցու դեռ ոչ այնքան անմիջական լինելու մասին և նախապատվություն տվեց տվյալ կուրսում դասավանդող դասախոսի վրա ստանձնել կուրատորի պարտականությունը:

Ս.Սուվարյանը նույնպես խոսեց կուրատորի պարտականությունների մասին, որոք փոքր ինչ աղավաղված են և նույնականացվում են դասղեկի պարտականության հետ: Ուսման գործընթացում ծագող խնդիրների, դրանք լուծելու և աշխատանքի արդյունավետությունը տեսնելու համար Ս.Սուվարյանն առաջարկեց մասնավորեցնել իրավիճակը և “իմանալ ումից ինչ պահանջել”: Նա նշեց, որ արդյունավետության հասնելու համար բացի կուրատորին դիմելուց ուսանողը կարող է դիմել նաև ամբիոնի վարիչին:

Ա.Համազասպը ներկայացրեց, որ կուրատոր-ուսանող հարաբերությունների ոչ լիարժեք լինելու խնդիրը համահամալսարանական է և ունի համակարգային բնույթ: Խնդրին լուծում տալու համար ռեկտորի հետ հանդիպումներից մեկի ժամանակ որոշվել է կուրատորների ինստիտուտի պարտականությունը դնել ուսանողի՝ ապագա ասպիրանտի վրա՝ ավելի անկեղծ և ավելի անկաշկանդ շփում ապահովելու համար ինչի արդյունքում վերոնշված խնդիրը ինքնաբերաբար կկարգավորվի:

Ս.Առաքելյան Կարևորեց կուրատորական ինստիտուտի առկայությունը: - Դասախոսը պետք է աշխատի ավելի կիրթ ուսանող և քաղաքացի դաստիարակի: Համալսարանական ուսանողը պարտավոր է կիրթ լինել,-ասաց Ս.Առաքելյանը:

Ա.Գրիգորյանն ասաց, որ կուրատորների աշխատանքը անձամբ է կանոնակարգում, - Ռեկտորատի կողմից կուրատորական ինստիտուտը միայն 1-ին կուրսերում

կազմակերպելու միակ նպատակն է ուսանողին ադապտացնելու համալսարանական կյանքին և միջավայրին: Ծանոթացնելու ուսումնառության կրեդիտային համակարգին: Սակայն կան որոշակի սահմաններ, որից առավել, նույնիսկ մեծ ցանկության դեպքում, մենք չենք կարող օգնել ուսանողին,-խոսքն ավարտեց Ա.Գրիգորյանը:

Ա.Հակոբյանը խոսեց դասախոսի ոչ պատշաճ և դասախոսին ոչ վայել պահվածքի վերաբերյալ: Իր խոսքում Ա.Հակոբյանն առաջարկեց դասախոսների հետ նույնպես դաստիարակչական աշխատանք տանել:

Մ.Գրիգորյանը կարևորեց կուրատորական ինստիտուտի առկայությունը: -Կուրատորը պետք է լինի հանդուրժող, կարեկցող անձնավորություն,-ասաց նա: Ի պատասխան Ա.Հակոբյանի հնչեցրած առաջարկի Մ.Գրիգորյանն ասաց, որ որպես դեկան ցավ է զգում, որ ուսաղին դաստիարակելու համար դասախոսը իրեն թույլ է տալիս անկիրթ պահվածք և բռի բռեր օգտագործելու իրավունք: -Ուսանողը պետք է կրթվի և դաստիարակվի նայելով իր դասախոսին և նրա պահվածքին: Այսօրվա ուսանողը շատ զգայուն է և համարձակ,-ասաց Մ.Գրիգորյանը: Ելույթի ավարտին Գրիգորյանն ասաց, որ ցանկացած ցինիկ և գռեհիկ պահվածք արմատախիլ կարվի ֆակուլտետից:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՍԵՑԻՆ. Փոխդեկան Արսեն Գրիգորյանի հաղորդումը 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների ընթացքի վերաբերյալ: Նա ներկայացրեց ուսանողների առաջադիմության և հեռացման վերաբերյալ ամփոփ տվյալները: Ա.Գրիգորյանը նշեց նաև որ քննություններն ընթացել են ըստ սահմանված կանոնակարգի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանը բարձրաձայնեց արդյունքների քննարկման ժամանակ ներկայացնել ուսանողների առաջադիմության լավ և դրական կողմերը այնուհետև բավարար գիտելիքներով ավարտող խավի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

4. ԼՍԵՑԻՆ. Փոխդեկան Վ.Վարդանյանի հակիրճ հաղորդումը ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի վերաբերյալ: Հաղորդման վերջում

Վ.Վարդանյանը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցն ըստ մասնագիտությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցը:

5. ԼՍԵՑԻՆ. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչ Ա.Հ.Պոտոսյանի հաշվետվությունը 2016-2017 ուս.տարվա ընթացքում ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ: Հակիրճ ներկայացրեց ամբիոնում առկա հաստիքային ռեսուրսները, բակալավրիատում և մագիստրատուրայում սպասարկման ուղղությունները: Ներկայացրեց նաև մշակված և լրամշակված կրթական ծրագրերի մասին: Իր խոսքում Ա.Պոտոսյանը մանրամասնորեն խոսեց ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ: Պրակտիկայի անցկացման որակի և անցկացման վայրի մասին: Ելույթում նշվեցին նաև հրապարակումների, դանց քանակի, ոլորտի և բնույթի մասին: Ներկայացրեց նաև ամբիոնի գիտական ներուժը: Միջազգային համագործակցության շրջանակները: /Հաշվետվությունը կցվում է/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ.Ա.Գրիգորյանը իր ելույթում առանձնացրեց ամբիոնի ջանքերով միջազգային կապերի ստեղծման և ձևավորման կարողությունը, ուսանողների փոխանակման գործընթացի կազմակերպման բարձր մակարդակը: Բարձր գնահատեց ամբիոնում միջազգային կապերի ստեղծման և պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ: Շեշտեց նաև ընթացիկ տարում ամբիոնում գրագողության բացահայտվելու հարցը: Գրիգորյանն առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար

6. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ. 18T-1E005 ծածկագրով և “Թաքնված և Կույր հանքավայրերի որոնման երկրաքիմիական մեթոդի ներդրումը, Հայաստանի Հանրապետության հանքավայրերի և հանքային դաշտերի լիթոերկրաքիմիական քարտեզների

կազմման գործընթացում” վերնագրով թեմայի ղեկավար Լևոն Վարդանի Հարությունյանի հաղորդումը 2018-2020 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու երաշխավորություն ստանալու նպատակով: Իր խոսքում Լ.Հարությունյանը մանրամասնորեն ներկայացրեց մրցույթին մասնակցող թեմայի բնագավառը և նախատեսվող ուսումնասիրությունների բնույթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանն իր խոսքում բարձր գնահատեց բնական գիտությունների մրցույթներին մասնակցելու նախաձեռնությունը: Առաջադրվող թեման արդիական է, - ասաց Մ.Գրիգորյանը,- և այն իրականացնելու արդյունքում կունենանք ՀՀ հանքավայրերի ու հանքային դաշտերի ներկայիս իրավիճակի լիթոերկրաքիմիական պատկերը, ինչը հնարավորություն կտա կազմելու համապատասխան քարտեզներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել 18T-1E005 ծածկագրով և “Թաքնված և Կույր հանքավայրերի որոնման երկրաքիմիական մեթոդի ներդրումը, Հայաստանի Հանրապետության հանքավայրերի և հանքային դաշտերի լիթոերկրաքիմիական քարտեզների կազմման գործընթացում” վերնագրով թեմայի ներկայացումը 2018-2020 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու:

ԼՄԵՑԻՆ. 18T-1E351 ծածկագրով և “Ռեկուլտիվացված պոչամբարների էկոլոգիական ռիսկի գնահատումը երկրաբանա-երկիրաֆիզիկական մեթոդների կիրառմամբ (Ախթալա-2 պոչամբարի օրինակով)” վերնագրով թեմայի ղեկավար Շահեն Վոլոդյայի Խաչատրյանի հաղորդումը 2018-2020 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու երաշխավորություն ստանալու նպատակով: Իր խոսքում Շ.Խաչատրյանը մանրամասնորեն ներկայացրեց մրցույթին մասնակցող թեմայի բնագավառը և նախատեսվող ուսումնասիրությունների բնույթը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել 18T-1E351 ծածկագրով և “Ռեկուլտիվացված պոչամբարների էկոլոգիական ռիսկի գնահատումը երկրաբանա-երկիրաֆիզիկական մեթոդների

կիրառմամբ (Ախթալա-2 պոչամբարի օրինակով)” վերնագրով թեմայի ներկայացումը 2018-2020 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու:

ԼՄԵՑԻՆ. 18T-1E163 ծածկագրով և “Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում” վերնագրով թեմայի ղեկավար Թրահել Գերասիմի Վարդանյանի հաղորդումը 2018-2020 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու երաշխավորություն ստանալու նպատակով: Իր խոսքում Թ.Վարդանյանը մանրամասնորեն ներկայացրեց մրցույթին մասնակցող թեմայի բնագավառը և նախատեսվող ուսումնասիրությունների բնույթը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել 18T-1E163 ծածկագրով և “Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում” վերնագրով թեմայի ներկայացումը 2018-2020 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու:

ԼՄԵՑԻՆ. 18T-1E348 ծածկագրով և “Արարատյան դաշտի ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ռիսկի գնահատումը և կանխատեսման մեթոդիկայի բարելավման ուղիների մշակումը” վերնագրով թեմայի ղեկավար Վարդուհի Գուրգենի Մարգարյանի հաղորդումը 2018-2020 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու երաշխավորություն ստանալու նպատակով: Իր խոսքում Վ.Մարգարյանը մանրամասնորեն ներկայացրեց մրցույթին մասնակցող թեմայի բնագավառը և նախատեսվող ուսումնասիրությունների բնույթը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել 18T-1E348 ծածկագրով և “Արարատյան դաշտի ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ռիսկի գնահատումը և կանխատեսման մեթոդիկայի բարելավման ուղիների մշակումը” վերնագրով թեմայի

ներկայացումը 2018-2020 զիտական և զիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին մասնակցելու:

ԼՄԵՑԻՆ. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի ասպիրանտ Գորիկ Դավթի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի «Անտառային գեոհամակարգերի ծառայությունների գնահատումը և մոդելավորումը (Տավուշի մարզի օրինակով)» վերնագրում խմբագրական փոփոխություններ կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց. Ա.Հ.Պոտոսյանը, ով նշեց, որ ելնելով թեմային վերաբերող ձեռք բերված նյութերի և տեղեկատվության բնույթից անհրաժեշտություն է առաջացել թեմայի վերնագրում կատարել խմբագրական փոփոխություն՝ նախկին «Անտառային գեոհամակարգերի ծառայությունների գնահատումը և մոդելավորումը (Տավուշի մարզի օրինակով)» վերնագրով թեման վերափոխել և հաստատել «Անտառային գեոհամակարգերի էկոհամակարգային ծառայությունների մոդելավորումը և արժեքային գնահատումը (Տավուշի մարզի օրինակով)» վերնագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի ասպիրանտ Գորիկ Դավթի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Անտառային գեոհամակարգերի էկոհամակարգային ծառայությունների մոդելավորումը և արժեքային գնահատումը (Տավուշի մարզի օրինակով)» վերնագրով:

ԼՄԵՑԻՆ. «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչ Պ.Գ.Դավթյանի հաղորդումը ամբիոնի պրոֆեսոր Վ.Ռ.Բոյնագրյանի Վ.Բոյնագրյանի «Трехязычный пояснительный словарь основных терминов и понятий по геоинформатике, геодезии и картографии» վերնագրով եռալեզու բառարանի հրատարակման վերաբերյալ: Պ.Գ.Դավթյանը ներկայացրեց բառարանին կցված գրավոր կարծիքները՝ Լեզվի պետական տեսչությունից, Գեոդեզիայի և քարտեզագրության ՊՈԱԿ-ից, որտեղ նշված է, որ բառարանը խմբագրման կարիք ունի: Պ.Դավթյանը նշեց նաև, որ

բառարանի հեղինակները գեոդեզիայի և քարտեզագրության մասնագետներ չեն, ինչից և առաջ են եկել նման բացթողումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ. Հ.Ա.Բաբայանը, ով իր խոսքում, որպես գեոդեզիայի մասնագետ, նշեց իր պարտավորությունը, բարձրաձայնելու, որ ներկայացված բառարանը ներկայիս վիճակով, թե՛ մասնագիտական և թե՛ լեզվական բացթողումներով չի կարելի երաշխավորել տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հանձնարարել ամբիոնին 1 ամսվա ընթացքում քննարկել և ուսումնասիրել բառարանը, որոշել կա արդյո՞ք այդ բառարանի անհրաժեշտությունը ամբիոնում, ֆակուլտետում, բավարարում է արդյո՞ք այսօրվա պահանջներին: Այնուհետև որոշում ներկայացնել գիտխորհուրդ և տալ առաջարկություն հրատարակման վերաբերյալ:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան